

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

**«ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ (ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**Բաժին «Մաքսային միություն»**

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
<b>I. Մաքսային վարչարարության ոլորտ</b>				
1.	Մաքսային միությունում մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այն միջազգային պայմանագրերի ցանկի արդիականացում, որոնց միանալը Մաքսային միությանն անդամակցելու հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության համար պարտադիր է, այդ թվում՝ Մաքսային միության անդամ պետությունների «Մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Մաքսային միության անդամ պետություններ	սույն միջոցառումների ծրագրի («ճանապարհային քարտեզ») (այսուհետ՝ սույն ծրագիր) հաստատման օրվանից 2 ամիս	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
1.1	Մաքսային միությունում մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այն միջազգային պայմանագրերի ցանկի արդիականացում, որոնց միանալը Մաքսային միությանն անդամակցելու հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության համար պարտադիր է, այդ թվում՝ Մաքսային միության անդամ պետությունների «Մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը	ՀՀ ֆինանսների նախարարություն	24.02.2014 թ.	միջազգային պայմանագրերի ցանկ
2.	<b>Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ Մաքսային միության օրենսգրքին և մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված այն որոշումների ցանկի արդիականացում, որոնց ընդունումը Հայաստանի Հանրապետության կողմից կատարման համար պարտադիր է՝ Մաքսային միությանն անդամակցելու նպատակով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>  <b>անդամ պետություններ</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</b>	
2.2	Մաքսային միության հանձնաժողովի և	Հայաստանի	24.02.2014 թ.	որոշումների ցանկ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ Մաքսային միության օրենսգրքին և մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված այն որոշումների ցանկի արդիականացում, որոնց ընդունումը Հայաստանի Հանրապետության կողմից կատարման համար պարտադիր է՝ Մաքսային միությանն անդամակցելու նպատակով	Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ		
3.	<b>Հայաստանի Հանրապետության այն նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ է լինելու կատարել փոփոխություններ՝ դրանք Մաքսային միության օրենսդրությանը համապատասխանեցնելու համար, կամ որոնք անհրաժեշտ է լինելու ուժը կորցրած ճանաչել</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  ՀՀ ֆինանսների նախարարություն</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս</b>	
3.1	Հայաստանի Հանրապետության այն նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ է լինելու կատարել փոփոխություններ՝ դրանք Մաքսային միության օրենսդրությանը համապատասխանեցնելու համար, կամ որոնք անհրաժեշտ է լինելու ուժը կորցրած ճանաչել	ՀՀ ֆինանսների նախարարություն	30.01.2014 թ.	ցանկ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
3.2	Նորմատիվ իրավական ակտերի ցանկի կազմում	ՀՀ ֆինանսների նախարարություն	24.01.2014 թ.	ցանկ
3.3	Ցանկի ներկայացում և համաձայնեցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ	ՀՀ ֆինանսների նախարարություն	30.01.2014 թ.	պաշտոնական գրություն՝ համապատասխան նորմատիվ իրավական ակտերի ցանկի հետ
4.	<b>Հայաստանի Հանրապետության միանալը «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների՝ Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխման կարգի և դրանց բացթողման հետ կապված մաքսային ձևակերպումների իրականացման մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին (2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրության խմբագրությամբ)</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական տարածքին անդամակցելու մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից (այսուհետ՝ անդամակցության մասին միջազգային պայմանագիր)</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
4.(I).	Հայաստանի Հանրապետության միանալը «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների՝ Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխման կարգի և դրանց բացթողման հետ կապված մաքսային ձևակերպումների իրականացման մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին (2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրության խմբագրությամբ)	ՀՀ ֆինանսների նախարարություն	Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական տարածքին անդամակցելու մասին միջազգային պայմագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից  (այսուհետ՝ անդամակցության մասին միջազգային պայմանագիր)	անդամակցության մասին պայմանագիր
4.1	Ֆիզիկական անձանց կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգի նախապատրաստում և կիրառում՝ Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման	Հայաստանի Հանրապետություն	մինչև Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	Կարգի ներդաշնակեցմանն ուղղված նորմատիվ իրավական ակտի մշակման միջոցով՝ այն Մաքսային միության մաքսային օրենսդրության սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում կիրառելու նպատակով		տարածքին անդամակցելը  (այսուհետ՝ անդամակցել)	
4.1.1.	Մաքսային միության անդամ պետությունների համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրություն	ՀՀ ֆինանսների նախարարություն	07.03.2014 թ.	տեղեկանք
4.1.2.	Համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	20.03.2014 թ.	համապատասխան իրավական ակտի նախագիծ
5.	Նախնական որոշումների հետ կապված աշխատանքների կազմակերպում՝  Մաքսային միության մաքսային օրենսգրքին համատապասխան՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից 1 ամիս	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<p>համաձայն ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումների ընդունման և տրամադրման կարգի մշակում (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ).</p> <p>ՄՄ ԱՏԳ ԱԱ համաձայն ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումների վերաբերյալ տվյալների կենտրոնացված համակարգի ձևավորում և դրա մատչելիության ապահովում, այդ թվում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով.</p> <p>ՄՄ ԱՏԳ ԱԱ համաձայն ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելու գործընթացի կազմակերպում</p>			
5.1.	Մաքսային միության անդամ պետությունների համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրություն	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	28.03.2014 թ.	տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
5.2.	Նախնական որոշումների կենտրոնացված համակարգի ստեղծում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ ֆինանսների նախարարություն	1 ամիս՝ անդամակցելու պահից	
5.3.	Համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	1 ամիս՝ անդամակցելու պահից	համապատասխան իրավական ակտի նախագիծ
6.	Մաքսային միության մաքսային օրենսդրության պահանջներին համապատասխանող տարանցիկ փոխադրման հայտարարագրի, ապրանքային հայտարարագրի, ուղևորային մաքսային հայտարարագրի և տրանսպորտային միջոցի մասին հայտարարագրի օգտագործման, ինչպես նաև դրանց լրացման և դրանց հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման հնարավորության ապահովում	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ	անդամակցելու պահից	
6.1.	Մաքսային միության մաքսային օրենսգրքի պահանջներին համապատասխանող տարանցիկ փոխադրման հայտարարագրի և լրացման կարգի ուսումնասիրություն	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	20.02.2014 թ.	



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
6.2.	Տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացման կարգի նախագծի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	20.03.2014 թ.	համապատասխան իրավական ակտի նախագիծ
6.3.	Հայաստանի Հանրապետությունում տարանցիկ փոխադրման հայտարարագրերի օգտագործման հնարավորության ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ ֆինանսների նախարարություն	20.03.2014 թ.	տեղեկանք
7.	<b>Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված մաքսային փաստաթղթերի ձևերի օգտագործման ապահովում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>  <b>անդամ պետություններ</b>	<b>անդամակցելու պահից</b>	
7.1	Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված մաքսային փաստաթղթերի ուսումնասիրություն և դրանց ձևերի հաստատում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական	20.03.2014 թ.	համապատասխան իրավական ակտի նախագիծ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
		Եկամուտների կոմիտե		
7.2	Հայաստանի Հանրապետությունում այդ փաստաթղթերի օգտագործման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ ֆինանսների նախարարություն	20.03.2014 թ.	տեղեկանք
8.	Մաքսային նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչմանն ուղղված միջոցների ձեռնարկում	Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս	
8.1	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների հետ ընդհանուր սահմանի բացակայությունը՝ նույնականացման միջոցների շուրջ բանակցությունների վարում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	24.03.2014 թ.	համապատասխան արձանագրություն
9.	Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության իրականացման իրավական հիմքերի և գործելակերպի ուսումնասիրություն և դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկների նախապատրաստում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն	ոչ ավելի, սույն ծրագրի հաստատման օրվանից 6 ամիս	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	(անհրաժեշտության դեպքում)	անդամ պետություններ		
9.1	<p>Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող մաքսային հսկողության գործելակերպին ծանոթանալու նպատակով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասնագետների համար համապատասխան պայմանների ապահովում</p> <p>Միջոցառումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	24.06.2014 թ.	դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկների նախապատրաստում (անհրաժեշտության դեպքում)
10.	Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ձևերը և դրա իրականացման կարգը Մաքսային միության օրենսդրությանը համապատասխանեցնելուն ուղղված միջոցների ձեռնարկում	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>անդամ պետություններ</p>	մինչև անդամակցելը	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
10.1	Մաքսային միության օրենսդրությանը համապատասխան մաքսային հսկողություն իրականացնելու կարգի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	20.03.2014 թ.	համապատասխան իրավական ակտի նախագիծ
11.	<b>Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների մաքսային ծառայությունների պատշտոնատար անձանց համագործակցության կազմակերպում՝ «Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայության ներկայացուցչությունների գործունեությանն առնչվող հարցերով մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 2011 թվականի հունիսի 22-ի համաձայնագրին համապատասխան</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>  <b>անդամ պետություններ</b>	<b>անդամակցելու պահից</b>	
11.1	Եվրասիական տնտեսական համայնքի և անդամ պետությունների ներկայացուցիչների հետ քննարկումների, անհրաժեշտության դեպքում, հանդիպումների կազմակերպում, համագործակցության մեխանիզմների մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական	24.03.2014 թ.	համապատասխան արձանագրություն

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
		Եկամուտների կոմիտե		
12.	Անդամ պետությունների մշակած միասնականացված մեխանիզմների կիրառման նպատակով Հայաստանի Հանրապետությունում ռիսկերի կառավարման համակարգի և ռիսկերի կառավարման գործընթացի տեղեկատվական ու տեխնիկական ապահովման վերլուծություն	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ	սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս	
12.1	Եվրասիական տնտեսական համայնքի մասնագետների ծանոթացում Հայաստանի Հանրապետությունում ռիսկերի կառավարման գործող համակարգին  Միջոցառումն իրականացվում է Եվրասիական տնտեսական համայնքի ներկայացուցիչների կողմից	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	24.02.2014 թ.	տեղեկանք ՀՀ ռիսկերի կառավարման համակարգի վերլուծության մասին
13.	Մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ անցումային դրույթների սահմանում, որոնցով հնարավոր է դառնում Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող մաքսային միջնորդներին,	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողներին, մաքսային պահեստների տիրապետողներին, անմաքս առևտրի խանութների տիրապետողներին, մաքսային փոխադրողներին ընդգրկել Մաքսային միության մաքսային օրենսգրքով սահմանված համապատասխան ռեեստրներում</b>			
13.1	Համապատասխան ոլորտների ուսումնասիրություն	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	24.02.2014 թ.	համապատասխան արձանագրություն
13.2	Հայաստանի Հանրապետությունում այս ինստիտուտներին ներկայացվող պահանջների ներդրման համար անհրաժեշտ ժամկետների սահմանում			
13.3.	Այս ոլորտների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում  Ֆինանսական կառույցների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ) ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում			
13.4	Անցումային դրույթների, անցումային ժամկետների հստակեցում, քննարկում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ			
14.	<b>ՄՃՓ գրքույկներով երաշխիքային գումարի չափի համապատասխանեցում անդամ</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելու</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>պետություններում սահմանված չափին</b>		<b>պահից</b>	
15.	<b>Հայաստանի Հանրապետությունում մաքսային իրավահարաբերությունները կարգավորող օրենքի նախագծի մշակում, որում կիրացվեն Մաքսային միության մաքսային օրենսգրքի՝ անդամ պետությունների օրենսդրությանն արված հղումային նորմերը</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>մինչև անդամակցելը</b>	
15.1	Մաքսային միության անդամ պետությունների համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրություն	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	28.02.2014 թ.	տեղեկանք
15.2	Համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	01.03.2014 թ.	համապատասխան իրավական ակտի նախագիծ
16.	<b>Մաքսային միության մաքսային օրենսդրության և մաքսային իրավահարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների պահպանումն ապահովելու</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ</b>	<b>անդամակցելու պահից 3 ամիս</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>նպատակով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում փոփոխությունների կատարում</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>		
16.1	Մաքսային միության անդամ պետությունների համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրություն	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	անդամակցելու պահից 3 ամիս	համապատասխան իրավական ակտի նախագիծ
16.2.	Համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	ՀՀ արդարադատության նախարարություն		
17.	<b>Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների կատարում՝ կապված Հայաստանի Հանրապետության Մաքսային միությանը անդամակցելու հետ</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելու պահից 3 ամիս</b>	
17.1	Մաքսային միության անդամ պետությունների համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրություն	ՀՀ ֆինանսների նախարարություն	անդամակցելու պահից 3 ամիս	համապատասխան իրավական ակտերի նախագծեր



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
17.2	Համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
18.	<b>Մաքսային միության մաքսային օրենսդրությանը չհամապատասխանող՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերն ուժը կորցրած ճանաչելը</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելու պահից 3 ամիս</b>	
18.1	Իրավական ակտերի ցանկի համաձայնեցում Եվրասիական տնտեսական համայնքի ներկայացուցիչների հետ	ՀՀ ֆինանսների նախարարություն	1 ամիս՝ անդամակցելու պահից	պաշտոնական գրություն՝ համապատասխան նորմատիվ իրավական ակտերի ցանկի հետ
18.2	Մաքսային միության օրենսդրությանը չհամապատասխանող իրավական ակտերն ուժը կորցրած ճանաչելու մասին նախագծերի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն	3 ամիս՝ անդամակցելու պահից	համապատասխան իրավական ակտերի նախագծեր
19.	<b>Մաքսային միության անդամ չհանդիսացող պետությունների հետ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կիրառման հարցի և մաքսային վարչարարության գործընթացի վրա դրանց ազդեցության ուսումնասիրություն</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
19.1	Համապատասխան միջազգային համաձայնագրերի ցանկի կազմում	ՀՀ ֆինանսների նախարարություն	24.02.2014 թ.	պաշտոնական գրություն համապատասխան իրավական ակտերի ցանկով
19.2	Համաձայնագրերի ներկայացում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ թարգմանության նպատակով	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն		
19.3	Համաձայնագրերի ներկայացում Եվրասիական տնտեսական համայնքին՝ ուսումնասիրության նպատակով	ՀՀ արտաքին գործերի նախարարություն  ՀՀ արդարադատություն նախարարություն		
20.	<b>Մաքսային միության անդամ չհանդիսացող պետությունների հետ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերը Մաքսային միության իրավապայմանագրային բազայի հետ համապատասխանեցնելուն ուղղված ծրագրի մշակում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս</b>	
20.1	Եվրասիական տնտեսական համայնքի կողմից պայմանագրերի ուսումնասիրությունից հետո քննարկման կազմակերպում և իրականացվելիք	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն	24.03.2014 թ.	համապատասխան արձանագրություն

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման Ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	քայլերի մշակում	առընթեր պետական եկամոտների կոմիտե  ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ արտաքին գործերի նախարարություն		
21.	<b>Միջազգային հաղորդակցությունների համար բաց օդանավակայաններում Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության մյուս անդամ պետությունների միջև տեղափոխվող այն ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության վերացում, որոնց ծագման երկիրը Հայաստանի Հանրապետությունն է կամ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունները</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ</b>	<b>անդամակցության մասին միջազգային պայմանագրով սահմանված Ժամկետի համաձայն</b>	
21.1	Մաքսային միության անդամ պետությունների փորձի ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամոտների կոմիտե	անդամակցության մասին միջազգային պայմանագրով սահմանված Ժամկետի համաձայն	տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
22.	Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև միջազգային հաղորդակցության համար բաց օդանավակայաններում Մաքսային միության ապրանքների տեղափոխման մաքսային հսկողության վերացում, ինչպես նաև Մաքսային միության տարածքով ապրանքների տեղափոխում ենթադրող մաքսային ընթացակարգերով ձևակերպված օտարերկրյա ապրանքների մաքսային հսկողության վերացում՝ նման փոխադրման պայմաններին համապատասխան	Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ	անդամակցության մասին միջազգային պայմանագրով սահմանված ժամկետի համաձայն	
22.1	Մաքսային միության անդամ պետությունների փորձի ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամոտների կոմիտե	անդամակցության մասին միջազգային պայմանագրով սահմանված ժամկետի համաձայն	տեղեկանք
23.	Անդամ պետություններում կիրառվող տեղեկատվական համակարգերի, տեխնոլոգիաների և ընդհանուր մաքսային գործընթացների ուսումնասիրություն	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս	
23.1	Անդամ պետություններում կիրառվող տեղեկատվական համակարգերի,	Հայաստանի Հանրապետություն	15.02.2014 թ.	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	տեխնոլոգիաների և ընդհանուր մաքսային գործընթացների ուսումնասիրություն	Եվրասիական տնտեսական հանձնաժողով		
23.2	Անդամ պետությունների տեղեկատվական համակարգերի կիրառման համար պատասխանատու կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում և անցկացում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  Եվրասիական տնտեսական հանձնաժողով		
24.	<b>Նորմատիվ և այլ փաստաթղթերի համատեղ վերլուծության աշխատանքների կազմակերպում, որոնց պահանջները պետք է նախատեսված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական-ծրագրային միջոցներով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</b>	
24.1	Նորմատիվ և այլ փաստաթղթերի համատեղ վերլուծության աշխատանքների կազմակերպում, որոնց պահանջները պետք է նախատեսված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական-ծրագրային միջոցներով	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	10.02.2014 թ.	
24.2	Սույն ծրագրի 1-22-րդ կետերով իրականացված աշխատանքների արդյունքների վերլուծություն,	ՀՀ ֆինանսների նախարարություն		պահանջների ցանկ, որոնք պետք է նախատեսվեն ՀՀ ԿԱ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	որոնց պահանջները պետք է նախատեսված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական-ծրագրային միջոցներով	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե		ՊԵԿ տեղեկատվական-ծրագրային միջոցներով
24.3	Պահանջների վերլուծություն, որոնք պետք է նախատեսված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական-ծրագրային միջոցներով	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե		պահանջների ցանկ, որոնք պետք է նախատեսվեն ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական-ծրագրային միջոցներով
25	<b>Գործարար գործընթացների վերլուծություն, որոնցում կիրառվում են մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական-ծրագրային միջոցներ՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան</b>	<b>Հայաստանի Հանրապետություն Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</b>	
25.1	Գործարար գործընթացների վերլուծություն, որոնցում կիրառվում են մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական-ծրագրային միջոցներ՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	24.02.2014 թ.	տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների համար աշխատանքային փաստաթղթեր, որոնցում նկարագրվում են գործարար գործընթացները՝ Մաքսային միության մաքսային

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
				օրենսդրությանը համապատասխան
26.	Մաքսային միության տարածքով «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով փոխադրվող ապրանքների նկատմամբ իրականացվող հսկողության գործընթացների վերլուծություն	Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս	
26.1	Մաքսային միության տարածքով «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով փոխադրվող ապրանքների նկատմամբ իրականացվող հսկողության գործընթացների վերլուծություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամոտների կոմիտե	30.02.2014 թ.	տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների համար աշխատանքային փաստաթղթեր, որոնցում նկարագրվում են Մաքսային միության մաքսային տարածքով «Մաքսային  տարանցում» մաքսային ընթացակարգով փոխադրվող

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
				ապրանքների նկատմամբ հսկողության գործընթացները
27.	<b>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների մաքսային ծառայությունների միջև տեղեկությունների փոխանակման կազմակերպմանն առնչվող հարցերի վերլուծություն՝ նաև Մաքսային միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի կիրառմամբ (այսուհետ՝ ինտեգրված համակարգ)</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</b>	
27.1	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների մաքսային ծառայությունների միջև տեղեկությունների փոխանակման ժամանակ փոխանցվող տվյալների ձևաչափերի և կիրառվող տեխնոլոգիաների վերլուծություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	24.02.2014 թ.	տեղեկությունների փոխանակումն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի ցանկ
28.	<b>Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման վայրերում մաքսային ենթակառուցվածքի վիճակի վերլուծություն</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս</b>	



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
		<b>Հանրապետություն անդամ պետություններ</b>		
28.1	Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման վայրերում մաքսային ենթակառուցվածքի վիճակի վերլուծություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	15.02.2014 թ.	Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման վայրերում մաքսային ենթակառուցվածքի վիճակի վերլուծության վերաբերյալ տեղեկանք
29.	<b>Անցման կետերի անձնագրավորում՝ Մաքսային միության անդամ պետությունների արտաքին սահմանի անցման կետի անձնագրի ձևի հիման վրա՝ հաստատված Մաքսային միության հանձնաժողովի 2011թվականի հունիսի 22-ի N 688 որոշմամբ</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</b>	
29.1	Անցման կետերի անձնագրավորում՝ Մաքսային միության անդամ պետությունների արտաքին սահմանի անցման կետի անձնագրի ձևի հիման վրա՝ հաստատված Մաքսային միության հանձնաժողովի 2011թվականի հունիսի 22-ի N 688 որոշմամբ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	15.02.2014 թ.	Մաքսային միության անդամ պետությունների արտաքին սահմանի անցման կետի անձնագրի ձևի հիման վրա՝ անցման կետերի գույքագրման իրականացման վերաբերյալ հաշվետվություն
30.	<b>Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>կատարվում է սույն ծրագրի 23-28-րդ</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>արդիականացման և (կամ) նոր տեղեկատվական համակարգերի ներդրման մասին աշխատանքային ծրագրի մշակում նշելով ժամկետը, պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ներդրման գերակայությունները</b>		<b>կետերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո</b>	
30.1	Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի կատարելագործման և (կամ) նոր տեղեկատվական համակարգերի ներդրման մասին աշխատանքային ծրագրի մշակում՝ նշելով ժամկետը, պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ներդրման գերակայությունները	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	14.03.2014 թ.	Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի կատարելագործման և (կամ) նոր տեղեկատվական համակարգերի ներդրման մասին աշխատանքային ծրագիր
30.2	Տեղեկատվական համակարգերի կատարելագործման և ներդրման մասին աշխատանքային ծրագրի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ ֆինանսավորումն ապահովելու նպատակով	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	14.03.2014 թ.	պաշտոնական գրություն՝ աշխատանքային ծրագրի հետ միասին
30.3	Տեղեկատվական համակարգերի կատարելագործման և ներդրման մասին աշխատանքային ծրագրի իրականացման համար նախագծող ընկերություն ընտրելու գործընթացի կազմակերպում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	14.03.2014 թ.	ընտրված նախագծող ընկերության վերաբերյալ տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
30.4	Տեղեկատվական համակարգերի կատարելագործման և ներդրման մասին աշխատանքային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների գնման գործընթացի կազմակերպում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	14.03.2014 թ.	գնված տեխնիկական սարքավորումների վերաբերյալ տեղեկանք
31.	<b>Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների համար մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական-ծրագրային միջոցներ ստեղծելու և (կամ) տեղեկատվական տեխնոլոգիաներում և տեղեկատվական-ծրագրային միջոցներում փոփոխություններ կատարելու տեխնիկական պահանջների մշակում՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության հետ համապատասխանեցման նպատակով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի</b>	
31.1	Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների համար մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական-ծրագրային միջոցներ ստեղծելու և (կամ) տեղեկատվական տեխնոլոգիաներում և տեղեկատվական-ծրագրային միջոցներում փոփոխություններ կատարելու տեխնիկական պահանջների մշակում՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության հետ համապատասխանեցման նպատակով	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	15.04.2014 թ.	Մաքսային միության մաքսային օրենսդրության հետ համապատասխանեցման նպատակով Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների համար մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական-ծրագրային միջոցներ ստեղծելու և (կամ) տեղեկատվական տեխնոլոգիաներում և

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
				տեղեկատվական–ծրագրային միջոցներում փոփոխություններ կատարելու տեխնիկական պահանջներ
32.	<b>Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցելու կապակցությամբ անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ընդհանուր մաքսային ընթացակարգերի կիրառման նպատակով տեղեկատվական– ծրագրային միջոցների կատարելագործում, դրանց փոխանակման հաստատված տեխնոլոգիաներում և տեխնիկական պայմաններում փոփոխությունների կատարում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի</b>	
32.1	Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցելու կապակցությամբ անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ընդհանուր մաքսային ընթացակարգերի կիրառման նպատակով տեղեկատվական–ծրագրային միջոցների փոխանակման հաստատված տեխնոլոգիաներում և տեխնիկական պայմաններում փոփոխությունների կատարում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	15.05.2014 թ.	անդամ պետությունների մաքսային ծառայությունների տեղեկատվական–ծրագրային միջոցների փոխանակման տեխնիկական պայմաններում և տեխնոլոգիաներում կատարված փոփոխությունների ցանկ
32.2	Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի	ՀՀ կառավարությանն առընթեր պետական	15.05.2014 թ.	անդամ պետությունների մաքսային ծառայությունների

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	Հանրապետության անդամակցելու կապակցությամբ անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ընդհանուր մաքսային ընթացակարգերի կիրառման նպատակով տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործում	Եկամուտների կոմիտե		տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործման վերաբերյալ տեղեկանք
33.	<p>Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և ընդհանուր մաքսային ընթացակարգերով սահմանված պահանջների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործում և (կամ) նոր տեղեկատվական-ծրագրային միջոցների մշակում և ներդրում, այդ թվում՝</p> <p>Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տվյալների փոխանակման համար (այդ թվում՝ ինտեգրված համակարգի օգտագործմամբ) անհրաժեշտ փոխարկիչների կիրառում,</p> <p>Մաքսային միության տարածքով «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրումների նկատմամբ հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվական-</p>	Հայաստանի Հանրապետություն	ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<p>ծրագրային միջոցների ներդրում, Անդամ պետությունների արտաքին սահմաններից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում, անդամ պետությունների տարածք ժամանակավորապես ներմուծվող տրանսպորտային միջոցների հաշվառման և հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում, մաքսային ծառայությունների միջև նորմատիվ– տեղեկատվական բնույթի տեղեկությունների փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում, «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև վարչարարական փոխօգնության մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին համապատասխան՝ տեղեկությունների փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում, «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների վերլուծական և հսկողական գործառույթների իրականացման</p>			

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>համար տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի համաձայնագրին համապատասխան՝ տեղեկատվության փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում</b>			
33.1	Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տվյալների փոխանակման համար (այդ թվում՝ ինտեգրված համակարգի օգտագործմամբ) անհրաժեշտ փոխարկիչների կիրառում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	ծրագրի իրականացման հաշվետվություն
33.2	Մաքսային միության տարածքով «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրումների նկատմամբ հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	ծրագրի իրականացման հաշվետվություն
33.3	Անդամ պետությունների արտաքին սահմաններից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	ծրագրի իրականացման հաշվետվություն

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
33.4	Անդամ պետությունների տարածք ժամանակավորապես ներմուծվող տրանսպորտային միջոցների հաշվառման և հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	ծրագրի իրականացման հաշվետվություն
33.5	Մաքսային ծառայությունների միջև նորմատիվ– տեղեկատվական բնույթի տեղեկությունների փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	ծրագրի իրականացման մասին հաշվետվություն
33.6	«Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև վարչարարական փոխօգնության մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին համապատասխան՝ տեղեկությունների փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	ծրագրի իրականացման մասին հաշվետվություն
33.7	«Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների վերլուծական և հսկողական գործառնությունների իրականացման համար տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի համաձայնագրին համապատասխան՝ տեղեկատվության փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական–ծրագրային միջոցների	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	ծրագրի իրականացման մասին հաշվետվություն



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	ներդրում			
34.	<b>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներդրված համակարգերով աշխատելու նպատակով պաշտոնատար անձանց ուսուցում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի</b>	
34.1	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներդրված համակարգերով աշխատելու նպատակով պաշտոնատար անձանց համար ուսումնական դասընթացների, սեմինարների և գործնական պարապմունքների կազմակերպում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	իրականացրած միջոցառումների մասին հաշվետվություն
35.	<b>Մշակված (արդիականացված) տեղե- կատվական-ծրագրային միջոցները Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից թեստավորելու, փորձարկելու ու շահագործման ընդունելու աշխատանքների կազմակերպում և իրականացում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>անդամ պետություններ</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի</b>	
35.1	Մշակված (արդիականացված) տեղեկատվական- ծրագրային միջոցները Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	մշակված տեղեկատվական- ծրագրային միջոցների փորձարկումների մասին

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	կողմից թեստավորելու, փորձարկելու ու շահագործման ընդունելու աշխատանքների կազմակերպում և իրականացում			տեղեկատվություն
35.2	Մշակված (արդիականացված) տեղեկատվական– ծրագրային միջոցների շահագործման հանձնում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե		մշակված տեղեկատվական– ծրագրային միջոցները շահագործման հանձնելու համար պատրաստ լինելու մասին տեղեկատվություն
36.	<b>Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների մաքսային ծառայությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև տվյալների փոխանակման համակարգի կազմակերպում (ինտեգրված համակարգ ստեղծելուն ուղղված աշխատանքների շրջանակներում)</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ</b>	<b>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի</b>	
36.1	Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների մաքսային ծառայությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև տվյալների փոխանակման համակարգի կազմակերպում (ինտեգրված համակարգ ստեղծելուն ուղղված աշխատանքների շրջանակներում)	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	կատարված աշխատանքի մասին հաշվետվություն
37.	<b>Իրականացված աշխատանքների գնահատում և մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի ինտեգրման տիպային</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>առաջարկությունների մշակում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>մշակված աշխատանքային ծրագրի</b>	
37.1	Իրականացված աշխատանքների գնահատում և մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի ինտեգրման վերաբերյալ տիպային առաջարկությունների մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.05.2014 թ.	մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի ինտեգրման վերաբերյալ տիպային առաջարկությունների մասին փաստաթուղթ
38.	<b>Մաքսային ներկայացուցիչների, մաքսային փոխադրողների, ազատ պահեստների տիրապետողների, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների, մաքսային պահեստների տիրապետողների, ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների ռեզիդենտների (մասնակիցների) ռեեստրների հիման վրա՝ արդիականացված տեղեկատվության տրամադրում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>Անդամակցելուց 3 ամիս հետո</b>	
38.1	Մաքսային ներկայացուցիչների, մաքսային փոխադրողների, ազատ պահեստների տիրապետողների, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների, մաքսային պահեստների տիրապետողների, ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների ռեզիդենտների (մասնակիցների)	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.09.2014 թ.	տեղեկատվության տրամադրման վերաբերյալ տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	գրանցամատյանների հիման վրա արդիականացված տեղեկատվության տրամադրում			
39.	<b>Մաքսային անցման կետերի, Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների ներսերման վայրերի և Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների դուրսհանման վայրերի վերաբերյալ արդիականացված տեղեկատվության տրամադրում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>Անդամակցելուց 3 ամիս հետո</b>	
39.1	Մաքսային անցման կետերի, Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների ներսերման վայրերի և Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների դուրսհանման վայրերի վերաբերյալ արդիականացված տեղեկատվության տրամադրում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.09.2014 թ.	տեղեկատվության տրամադրման վերաբերյալ տեղեկանք
40.	<b>Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործում հաշվի առնելով Մաքսային միության ԱՏԳ ԱԱ-ին անցնելու հանգամանքը</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>Մաքսային միության ԱՏԳ ԱԱ-ին անցնելու մասին որոշումն ընդունելու օրվանից 2 ամիս</b>	
40.1	Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործում հաշվի առնելով Մաքսային միության ԱՏԳ ԱԱ-ին անցնելու հանգամանքը	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	01.03.2014 թ.	կատարելագործման վերաբերյալ հաշվետվություն

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
41.	Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանն անդամակցելու հանգամանքով պայմանավորված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 254 որոշմամբ հաստատված՝ մաքսային փաստաթղթերի էլեկտրոնային օրինակների կառուցվածքում և ձևաչափերում փոփոխությունների կատարում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս	
41.1.	Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանն անդամակցելու հանգամանքով պայմանավորված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 254 որոշմամբ հաստատված՝ մաքսային փաստաթղթերի էլեկտրոնային օրինակների կառուցվածքում և ձևաչափերում փոփոխությունների կատարում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	24.03.2014 թ.	Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանն անդամակցելու հանգամանքով պայմանավորված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 254 որոշմամբ հաստատված՝ մաքսային փաստաթղթերի էլեկտրոնային օրինակների կառուցվածքում և ձևաչափերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշում

## II. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
42.	Տեխնիկական կանոնակարգման և դրան առնչվող ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերի և Մաքսային միության իրավապայմանագրային բազայի իրավական համեմատական վերլուծություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այն իրավական ակտերի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ	Մինչև անդամակցելը	
42.1.	Տեխնիկական կանոնակարգման ոլորտում Մաքսային միության միջազգային համաձայնագրերի նորմերի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների պահանջների վերլուծության իրականացում և համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա ամփոփ փաստաթղթի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այն իրավական ակտերի ցանկի պատրաստում, որոնցում անհրաժեշտ կլինի կատարել փոփոխություններ, և դրանց ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն և Եվրասիական տնտեսական հանձնաժողով	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ հավատարմագրման ազգային մարմին	15.02.2014 թ.	ՀՀ օրենսդրության նորմերի և Մաքսային միության իրավապայմանագրային բազայի համեմատական վերլուծության ամփոփ փաստաթուղթ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության այն իրավական ակտերի ցանկը, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
43.	Տեխնիկական կանոնակարգման ոլորտում Հայաստանի Հանրապետության՝ որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամի ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ երրորդ երկրների հետ (այդ թվում ԱՊՀ շրջանակներում) կնքած միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների վերլուծության իրականացում	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ	մինչև անդամակցելը	
43.1	Տեխնիկական կանոնակարգման ոլորտում Հայաստանի Հանրապետության՝ որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամի ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ երրորդ երկրների հետ (այդ թվում ԱՊՀ շրջանակներում) կնքած միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների վերլուծության իրականացում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	30.03.2014 թ.	ստանձնած պարտավորությունների համեմատական վերլուծության ամփոփ փաստաթուղթ
44.	Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանն անդամակցելու կապակցությամբ, տեխնիկական կանոնակարգման ոլորտում սույն ծրագրի 43-րդ կետում նշված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների վերանայում և իրականացված վերանայման վերաբերյալ	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	մինչև անդամակցելը	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>տեղեկատվության տրամադրում Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (ըստ անհրաժեշտության)</b>	<b>անդամ պետություններ</b>		
44.1.	Տեխնիկական կանոնակարգման ոլորտում Հայաստանի Հանրապետության պարտավորությունների վերանայման մասին առաջարկությունների նախապատրաստում և խորհրդատվություններ Մաքսային միության անդամ պետությունների իրավասու մարմինների հետ տեխնիկական կանոնակարգման ոլորտում Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու կապակցությամբ սույն ծրագրի 43-րդ կետում նշված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների վերանայման հարցով (ըստ անհրաժեշտության)	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	28.02.2014 թ.	Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու մասին նախագծեր (ըստ անհրաժեշտության)
45.	<b>Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի ուժի մեջ մտնելու համար անցումային շրջանի ժամկետների սահմանման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում հաշվի առնելով Մաքսային միության ներկայումս գործող տեխնիկական կանոնակարգերում սահմանված անցումային դրույթները</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>  <b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>մինչև անդամակցելը</b>	



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
45.2	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների վերլուծության իրականացում, այդ թվում՝ դրանց կիրառումն ապահովող ստանդարտների ցանկի համեմատական վերլուծության իրականացում և Հայաստանի Հանրապետությունում չգործող ստանդատների ցանկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթի կազմում	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>տեխնիկական կանոնակարգերի մշակմանը մասնակցող ՀՀ իրավասու մարմիններ</p> <p>ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտ</p> <p>ՀՀ հավատարմագրման ազգային մարմին</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>անդամ պետություններ</p>	28.02.2014 թ.	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի կիրառումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետությունում չգործող ստանդարտների ցանկի և դրանց ընդունման հնարավոր ժամկետների մասին Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացվող ամփոփ փաստաթուղթ
45.3	Հայաստանի Հանրապետության բոլոր խոշոր արտադրողներին և ներմուծողներին ծանուցումների ուղարկում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Մաքսային	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ</p>	28.02.14թ.	Ամփոփ ցանկ Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու անցումային ժամկետները որոշելու նպատակով, ՀՀ-ում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու համար անցումային ժամկետների սահմանում և անցումային ժամկետների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով	արդյունաբերության զարգացման հիմնադրամ		կանոնակարգերը գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ անցումային ժամկետների մասին
46.	<b>Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի կիրառման խնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործարար համայնքի հետ խորհրդատվությունների իրականացում և սննդամթերքի հարցերով, ինչպես նաև թեթև և ծանր արդյունաբերության հարցերով կլոր սեղանների անցկացում</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն</b>	<b>մինչև անդամակցելը, այնուհետ՝ կանոնավոր կերպով</b>	
135.	Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի գանձման վերաբերյալ առանձին երկկողմ միջազգային պայմանագրերի չեղարկում	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելուց հետո համաձայնեցված ժամկետում</b>	
135.1.	Համապատասխան միջազգային պայմանագրերի ցանկի կազմում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	անդամակցելուց հետո համաձայնեցված ժամկետում	պաշտոնական գրություն՝ համապատասխան իրավական ակտերի ցանկով
136.	<b>Տեղեկատվական համակարգերի տեխնոլոգիական հարթակի ստեղծում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելուց առնվազն 1 ամիս</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	(փոխանակվող տեղեկատվության կառուցվածքին և ձևին ներկայացվող պահանջների համապատասխանեցում, ծրագրային ապահովման հետագա ներդրում՝ հաշվի առնելով տեղեկատվության կազմին և կառուցվածքին ներկայացվող պահանջները և ընդհանուր ձևաչափատրամաբանական հսկողությունը)		առաջ	
136.1.	Տեղեկատվական համակարգերի տեխնոլոգիական հարթակի ստեղծում (փոխանակվող տեղեկատվության կառուցվածքին և ձևին ներկայացվող պահանջների համապատասխանեցում, ծրագրային ապահովման հետագա ներդրում՝ հաշվի առնելով տեղեկատվության կազմին և կառուցվածքին ներկայացվող պահանջները և ընդհանուր ձևաչափատրամաբանական հսկողությունը)	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	30.05.2014 թ.	
137.	Վճարված անուղղակի հարկերի գումարների վերաբերյալ անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փորձնական փոխանակում՝ տեղեկատվության ծածկագրային պաշտպանության միջոցների	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ  Հայաստանի	անդամակցելուց առնվազն 1 ամիս առաջ	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>կիրառմամբ</b>	<b>Հանրապետություն</b>		
137.1.	Վճարված անուղղակի հարկերի գումարների վերաբերյալ անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փորձնական փոխանակում՝ տեղեկատվության ծածկագրային պաշտպանության միջոցների կիրառմամբ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	30.05.2014 թ.	տեղեկանք
<b>2. «Մաքսային միությունում ներկրման մաքսատուրքերի (այլ համարժեք տուրքերի, հարկերի և հավաքագրումների) հաշվեգրման և բաշխման կարգը սահմանելու և կիրառելու մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրին միանալը</b>				
138.	Ներկրման մաքսատուրքերի բաշխման նորմատիվների վերաբերյալ առաջարկությունների պատրաստում, անդամ պետությունների հետ այդ նորմատիվների համաձայնեցում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ  Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
138.1.	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների և անդամ պետությունների ներկայացուցիչների հետ քննարկումների կազմակերպում	ՀՀ ֆինանսների նախարարություն	30.01.2014 թ.	համապատասխան արձանագրություն
139.	<b>Ներկրման մաքսատուրքերի բաշխման նորմատիվների հաշվարկների ուսումնասիրություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի և խորհրդի նիստերի շրջանակներում և դրանց հետագա հաստատում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ  Հայաստանի Հանրապետություն</b>	<b>2014 թվականի առաջին կիսամյակ</b>	
140.	<b>2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության նախագծի պատրաստում</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ  Հայաստանի Հանրապետություն</b>	<b>2014 թվականի առաջին կիսամյակ</b>	
140.1.	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների և անդամ պետությունների ներկայացուցիչների հետ քննարկումների	ՀՀ ֆինանսների նախարարություն	2014 թվականի առաջին կիսամյակ	արձանագրության նախագիծ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման Ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	կազմակերպում			
141.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ներկրման մաքսատուրքերի հաշվեգրման և բաշխման համար միասնական հաշվի միջոցով մաքսային վճարումներ կատարելու կարգի ներմուծում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելուց առնվազն 1 ամիս առաջ	
141.1.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ներկրման մաքսատուրքերի հաշվեգրման և բաշխման համար միասնական հաշվի միջոցով մաքսային վճարումներ կատարելու կարգի ներմուծում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առնջեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ կենտրոնական բանկ	01.04.2014 թ.	տեղեկանք
142.	2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով պահանջվող՝ բյուջետային դասակարգման ծածկագրերի բացվածք՝ հետևյալ առնչությամբ՝ ներկրման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձման) գումարներ, այդ թվում՝ ներկրման այն մաքսատուրքերի մուտքերի (վերադարձման) գումարները, որոնց գծով վճարման պարտավորությունները ծագել են նախքան Հայաստանի Հանրապետության միանալը 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրին  բաշխված ներկրման մաքսատուրքերի գումարներ, որոնք փոխանցվել են այլ անդամ պետությունների արտարժույթային հաշիվներին բյուջե հաշվեգրված եկամուտների գումարներ, որոնք առաջացել են ներկրման մաքսատուրքերի գումարների բաշխման արդյունքում  ներկրման մաքսատուրքերի գումարներ, որոնք մուտքագրվել են բյուջե՝ այլ անդամ	Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ	անդամակցելու պահից	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	պետությունների կողմից բյուջե մուտքագրված՝ կետանցի գծով տոկոսագումարներ, որոնք սահմանված են 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով ներկրման բաշխված մաքսատուրքերի գումարներ, որոնց՝ այլ անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցումը կասեցված է			
142.1.	<p>2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով պահանջվող՝ բյուջետային դասակարգման ծածկագրերի բացվածք՝ հետևյալ առնչությամբ՝ ներկրման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձման) գումարներ, այդ թվում՝ ներկրման այն մաքսատուրքերի մուտքերի (վերադարձման) գումարները, որոնց գծով վճարման պարտավորությունները ծագել են նախքան Հայաստանի Հանրապետության միանալը 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրին</p> <p>բաշխված ներկրման մաքսատուրքերի գումարներ, որոնք փոխանցվել են այլ անդամ պետությունների արտարժութային հաշիվներին</p> <p>բյուջե հաշվեգրված եկամուտների գումարներ, որոնք առաջացել են ներկրման մաքսատուրքերի գումարների բաշխման արդյունքում</p> <p>ներկրման մաքսատուրքերի գումարներ, որոնք մուտքագրվել են բյուջե՝ այլ անդամ պետությունների կողմից բյուջե մուտքագրված՝ կետանցի գծով տոկոսագումարներ, որոնք սահմանված են 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով ներկրման բաշխված մաքսատուրքերի գումարներ, որոնց՝ այլ անդամ պետությունների</p>	ՀՀ ֆինանսների նախարարություն	01.03.2014 թ.	տեղեկանք



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	արտարժութային հաշիվներին փոխանցումը կասեցված է			
143.	Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N 493 որոշմամբ հաստատված՝ ներկրման մաքսատուրքերի հաշվառումը հաշվեգրման մեթոդով իրականացնելու միասնական սկզբունքների մասին կանոնների կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից	
143.1.	Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N 493 որոշմամբ հաստատված՝ ներկրման մաքսատուրքերի հաշվառումը հաշվեգրման մեթոդով իրականացնելու միասնական սկզբունքների մասին կանոնների կիրառում	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	անդամակցելու պահից	տեղեկանք
144.	Գանձապետարանների, կենտրոնական մաքսային մարմինների և ազգային (կենտրոնական) բանկերի կողմից՝ միջազգային պայմանագրերի նախագծերն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ գործողությունների կատարում, այդ թվում՝  Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում միասնական հաշվի բացում՝ ներկրման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելուց առնվազն 1 ամիս առաջ	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<p>Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բյուջեների միջև բաշխման նպատակով</p> <p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի միջև՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Հայաստանի Հանրապետության կառավարության հաշիվների սպասարկման մասին միջգերատեսչական համաձայնագրերի համապատասխանեցում՝ հաշվի առնելով 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրի պահանջները</p> <p>Անդամ պետությունների գանձապետարանների կողմից անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով հաշիվների բացում</p> <p>Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում արտարժույթով (բելառուսական ռուբլի, տենգե, ռուսական ռուբլի) հաշիվների բացում</p> <p>Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի</p>			

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<p>Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գանձապետարանների հետ՝ արտարժույթով հաշիվների մասին, ինչպես նաև այլ տեղեկությունների փոխանակում, որոնք անհրաժեշտ են ներկրման մաքսատուրքերի գումարները փոխանցելու համար</p> <p>Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գանձապետարանների հետ տեղեկությունների փոխանակման ձևերի համաձայնեցում</p> <p>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրերի մասին տեղեկատվության ներկայացում՝ անդամ պետությունների գանձապետարաններին</p> <p>Բելառուսի Հանրապետության ազգային բանկի հետ բելառուսական ռուբլիով, Ղազախստանի Հանրապետության ազգային բանկի հետ ղազախական տենգեով և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի հետ ռուսական ռուբլիով թղթակցային հաշիվների բացման մասին միջազգային պայմանագրերի կնքում</p> <p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի հետ Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով թղթակցային հաշիվների բացման մասին միջազգային պայմանագրերի կնքում</p>			

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
144.1.	<p>Գանձապետարանների, կենտրոնական մաքսային մարմինների և ազգային (կենտրոնական) բանկերի կողմից՝ միջազգային պայմանագրերի նախագծերն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ գործողությունների կատարում, այդ թվում՝</p> <p>Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում միասնական հաշվի բացում՝ ներկրման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բյուջեների միջև բաշխման նպատակով</p> <p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի միջև՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Հայաստանի Հանրապետության կառավարության հաշիվների սպասարկման մասին միջգերատեսչական համաձայնագրերի համապատասխանեցում՝ հաշվի առնելով 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրի պահանջները</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ կենտրոնական բանկ</p>	25.02.2014 թ.	տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
144.2.	<p>Անդամ պետությունների գանձապետարանների կողմից անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով հաշիվների բացում</p> <p>Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում արտարժույթով (բելառուսական ռուբլի, տենգե, ռուսական ռուբլի) հաշիվների բացում</p> <p>Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գանձապետարանների հետ՝ արտարժույթով հաշիվների մասին, ինչպես նաև այլ տեղեկությունների փոխանակում, որոնք անհրաժեշտ են ներկրման մաքսատուրքերի գումարները փոխանցելու համար</p> <p>Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գանձապետարանների հետ տեղեկությունների փոխանակման ձևերի համաձայնեցում</p> <p>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրերի մասին տեղեկատվության ներկայացում՝ անդամ պետությունների գանձապետարաններին</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	01.04.2014 թ.	տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<p>Բելառուսի Հանրապետության ազգային բանկի հետ բելառուսական ռուբլիով, Ղազախստանի Հանրապետության ազգային բանկի հետ ղազախական տենգեով և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի հետ ռուսական ռուբլիով թղթակցային հաշիվների բացման մասին միջազգային պայմանագրերի կնքում</p> <p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի հետ Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով թղթակցային հաշիվների բացման մասին միջազգային պայմանագրերի կնքում</p>			
145.	Անդամ պետությունների գանձապետարանների միջև ներկրման մաքսատուրքերի հաշվեգրման ու բաշխման վերաբերյալ տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով փոխանակման մեխանիզմի փորձարկում, թերությունների վերացում	անդամ պետություններ  Հայաստանի Հանրապետություն	անդամակցելուց առնվազն 1 ամիս առաջ	
145.1.	Անդամ պետությունների գանձապետարանների միջև ներկրման մաքսատուրքերի հաշվեգրման ու բաշխման վերաբերյալ տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով փոխանակման մեխանիզմի փորձարկում, թերությունների վերացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	01.04.2014 թ.	տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
146.	Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի և միջգերատեսչական համաձայնագրերի համապատասխանեցում 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրին	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից	
146.1.	Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի և միջգերատեսչական համաձայնագրերի համապատասխանեցում 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրին	ՀՀ ֆինանսների նախարարություն	անդամակցելու պահից	իրավական ակտի նախագիծ
3. «Ներկրման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակման կարգի մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրությանը միանալը				
147.	Հայաստանի Հանրապետության միանալը «Ներկրման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակման կարգի մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրությանը	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	
147.1.	Հայաստանի Հանրապետության միանալը «Ներկրման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակման կարգի մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրությանը	ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	արձանագրություն

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
<p align="center"><b>4. «Մաքսային միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման դեմ հակազդման միջոցների ապահովման մասին» 2011 թվականի դեկտեմբերի 19-ի պայմանագրին միանալը</b></p>				
148.	Ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության սահմանով արժույթի և (կամ) դրամական գործիքների տեղափոխման վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում՝ «Կանխիկ գումարների և (կամ) դրամական գործիքների հայտարարագրում» նշված տվյալների հիման վրա	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից	
148.1.	Ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության սահմանով արժույթի և (կամ) դրամական գործիքների տեղափոխման վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում՝ «Կանխիկ գումարների և (կամ) դրամական գործիքների հայտարարագրում» նշված տվյալների հիման վրա	ՀՀ կենտրոնական բանկ	30.04.2014 թ.	ՀՀ կենտրոնական բանկում նման տվյալների բազայի առկայություն
149.	Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի համապատասխանեցում 2011 թվականի դեկտեմբերի 19-ի պայմանագրին	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից	
149.1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրության	ՀՀ կենտրոնական	03.02.2014 թ.	ՀՀ օրենսդրության և



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	վերլուծություն՝ «Մաքսային միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (վաճման) և ահաբեկչության ֆինանսավորման դեմ հակազդման միջոցների ապահովման մասին» 2011 թվականի դեկտեմբերի 19-ի պայմանագրի դրույթներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանությունը պարզելու նպատակով	բանկ  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե		պայմանագրի դրույթների համեմատական վերլուծության մասին տեղեկանք
149.2.	Հայաստանի Հանրապետության օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն	ՀՀ կենտրոնական բանկ  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	01.03.2014 թ.	պաշտոնական գրություն՝ կից ներկայացված համապատասխան փոփոխություններով
149.3.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության ենթաօրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների կատարում	ՀՀ կենտրոնական բանկ  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.04.2014 թ.	ենթաօրենսդրական ակտեր

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
<b>5. «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման կարգի մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրին միանալը</b>				
<b>150.</b>	<b>Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի համապատասխանեցում 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրին</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելու պահից</b>	
150.1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծություն՝ «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման կարգի մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանությունը պարզելու նպատակով	ՀՀ կենտրոնական բանկ  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	03.02.2014 թ.	ՀՀ օրենսդրության և պայմանագրի դրույթների համեմատական վերլուծության մասին տեղեկանք
150.2.	Հայաստանի Հանրապետության օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն	ՀՀ կենտրոնական բանկ  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	01.03.2014 թ.	պաշտոնական գրություն՝ կից ներկայացված համապատասխան փոփոխություններով
150.3.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության ենթաօրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների կատարում	ՀՀ կենտրոնական բանկ  ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	30.04.2014 թ.	ենթաօրենսդրական ակտեր

**IX. Վիճակագրության ոլորտ**

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
151.	<b>Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների գործառույթների սահմանում՝ նորմատիվ իրավական ակտի ընդունման միջոցով (գործող նորմատիվ իրավական ակտում փոփոխությունների կատարման միջոցով) արտաքին առևտրի վիճակագրության և ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների կազմման, վարման, տարածման և օրենսդիր, գործադիր իշխանությանը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին դրանց տրամադրման գծով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>մինչև անդամակցելը</b>	
151.1.	Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների գործառույթների սահմանում՝ նորմատիվ իրավական ակտի ընդունման միջոցով (գործող նորմատիվ իրավական ակտում փոփոխությունների կատարման միջոցով) արտաքին առևտրի վիճակագրության և ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների կազմման, վարման, տարածման և օրենսդիր, գործադիր իշխանությանը և Եվրասիական տնտեսական	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամոտների կոմիտե  ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	30.04.2014 թ.	Փաստաթուղթը գտնվում է քննարկման փուլում՝ ընդունման անհրաժեշտությամբ պայմանավորված:

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	հանձնաժողովին դրանց տրամադրման գծով			
152.	<p>Մաքսային միության անդամ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի գծով պետական վիճակագրական դիտարկումների կազմակերպում՝ անդամ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի ոլորտում պետական վիճակագրական դիտարկումների կազմակերպմանն ուղղված միջոցառումների ծրագրի նախապատրաստման և իրականացման միջոցով (հաշվի առնելով փոխադարձ առևտրի վիճակագրության ոլորտում առկա Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավանորմատիվային բազան, ինչպես նաև անդամ պետությունների փորձը՝ դրա իրացման գծով), վիճակագրական գործիքակազմի մշակում և հաստատում, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ներգրավում փոխադարձ առևտրի ոլորտում պետական վիճակագրական դիտարկումների կազմակերպմանն ուղղված միջոցառումներում</p>	Հայաստանի Հանրապետություն	մինչև անդամակցելը	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
152.1.	Մաքսային միության անդամ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի գծով պետական վիճակագրական դիտարկումների կազմակերպում՝ անդամ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի ոլորտում պետական վիճակագրական դիտարկումների կազմակերպմանն ուղղված միջոցառումների ծրագրի նախապատրաստման և իրականացման միջոցով (հաշվի առնելով փոխադարձ առևտրի վիճակագրության ոլորտում առկա Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավանորմատիվային բազան, ինչպես նաև անդամ պետությունների փորձը՝ դրա իրացման գծով), վիճակագրական գործիքակազմի մշակում և հաստատում, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ներգրավում փոխադարձ առևտրի ոլորտում պետական վիճակագրական դիտարկումների կազմակերպմանն ուղղված միջոցառումներում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	30.04.2014 թ. (եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատողների՝ սույն թվականի հունվարի 20-ից նախատեսվող մոսկովյան քննարկումների արդյունքում այլ հանգամանքներ չառաջանան)	Փաստաթուղթը գտնվում է քննարկման փուլում:
153.	<b>Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական</b>	<b>մինչև անդամակցելը, այնուհետ՝ կանոնավոր կերպով</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	վիճակագրական ստորաբաժանման ներկայացուցիչների հետ վիճակագրական հարցերով՝ ներառյալ արտաքին առևտրի վիճակագրության և ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վերաբերյալ խորհրդատվությունների և հանդիպումների կազմակերպում	հանձնաժողով		
153.1.	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական ստորաբաժանման ներկայացուցիչների հետ վիճակագրական հարցերով՝ ներառյալ արտաքին առևտրի վիճակագրության և ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վերաբերյալ խորհրդատվությունների և հանդիպումների կազմակերպում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	պարբերաբար՝ 2014 թ. փետրվարից սկսած	

**Բաժին «Միասնական տնտեսական տարածք»**

**X. Արդյունաբերության ոլորտ**

**1. «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրին միանալը**

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
154.	<p>Ծանոթացում արդյունաբերության սուբսիդավորմանն ուղղված գործող պետական ծրագրերին, ներառյալ՝ դրանց իրականացման կանոններին ու կարգին:</p> <p>Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու նպատակահարմարության և (կամ) անհրաժեշտության ուսումնասիրություն և գնահատում դրա համապատասխանությունը 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի դրույթներին ապահովելու նպատակով</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 4 ամսվա ընթացքում</p>	
154.1.	Հայաստանի Հանրապետության այն իրավական ակտերի ցանկի պատրաստում, որոնցում անհրաժեշտ կլինի կատարել փոփոխություններ՝ այդ ակտերը «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին»	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	30.03.2014 թ.	իրականացված ակտերի ցանկ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի դրույթների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով			
154.2.	2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի դրույթների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակահարմարության ուսումնասիրություն և գնահատում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	15.04. 2014 թ.	տեղեկանք
154.3.	Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծերի մշակում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ արտաքին գործերի նախարարություն  ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ արդարադատության նախարարություն  ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	30.04. 2014 թ.	իրավական ակտերի նախագծեր



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
154.4.	Իրավական ակտերի նախագծերի քննարկում գործադիր իշխանության պետական մարմինների և հասարակության հետ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	մայիս-հունիս 2014 թ.	իրավական ակտերի նախագծեր
154.5.	Իրավական ակտերի նախագծերի տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Եվրասիական տնտեսական կոմիտեին	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	հուլիս-օգոստոս 2014 թ.	իրավական ակտերի նախագծեր
155.	<p>Ծանոթացում ԱՀԿ-ի «Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագրով արդյունաբերական սուբսիդիաների առնչությամբ ստանձնած պարտավորությունների իրականացման մասով Հայաստանի Հանրապետության փորձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տեղեկությունների հավաքագրման, ամփոփման և դրանք ԱՀԿ ներկայացնելու մասով իրականացվող աշխատանքների հետ:</p> <p>2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած</p>	<p><b>Հայաստանի Հանրապետություն</b></p> <p><b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b></p>	<p><b>սույն ծրագրի</b> հաստատման օրվանից 4 ամսվա ընթացքում</p>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>պարտավորությունների վրա՝ ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած առանձին պարտավորությունների ունեցած ազդեցության գնահատում</b>			
155.1.	<p>Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցառումների մասով ԱՀԿ համաձայնագրի կիրառման, ինչպես նաև համապատասխան տեղեկությունների հավաքագրման, ամփոփման և ԱՀԿ ներկայացման փորձի վերլուծություն</p> <p>2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների վրա՝ ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած առանձին պարտավորությունների ունեցած ազդեցության գնահատում</p>	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	30.04. 2014 թ.	տեղեկանք
156.	<b>Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների աշխատակիցների ծանոթացում արդյունաբերական սուբսիդիաների տրամադրման առանձնահատկություններին և կանոններին, որոնք սահմանվել են 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 4 ամսվա ընթացքում</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
156.1.	Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների աշխատակիցների այցելությունների կազմակերպում՝ 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրով սահմանված արդյունաբերական սուբսիդիաների տրամադրման առանձնահատկություններին և կանոններին ծանոթանալու նպատակով	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	30.04. 2014 թ.	տեղեկանք
<p align="center"><b>2. Անդամ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների մշակումը</b></p>				
157.	Արդյունաբերության ոլորտում Հայաստանի Հանրապետության ծրագրային փաստաթղթերի և գործող ռազմավարությունների վերլուծություն՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման ազգային գերակայությունները սահմանելու և Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի և Հայաստանի Հանրապետության միջև արդյունաբերական համագործակցության համար առաջնահերթ տնտեսության ոլորտների մասով հետագա որոշումներն ընդունելու նպատակով	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	2014 թ.	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
157.1.	Արդյունաբերության ոլորտում Հայաստանի Հանրապետության ծրագրային փաստաթղթերի և գործող ռազմավարությունների ցանկի սահմանում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	օգոստոս, 2014 թ.	ծրագրային փաստաթղթերի ցանկ
157.2.	Արդյունաբերության զարգացման գերակայությունների որոշման և Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի և Հայաստանի Հանրապետության միջև արդյունաբերության ոլորտում հետագա համագործակցության վերաբերյալ առաջարկությունների մշակում՝ որոշում կայացնելու նպատակով	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	հոկտեմբեր, 2014 թ.	առաջարկությունների փաթեթ
158.	<b>Արդյունաբերության ճյուղերում կիրառական հետազոտությունների իրականացման նպատակով գիտության և տեխնիկայի ոլորտներում համագործակցության հնարավոր մեխանիզմների ուսումնասիրություն</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>2014 թ.</b>	
158.1.	Համագործակցության հնարավոր մեխանիզմների ուսումնասիրությունների հիման վրա առաջարկությունների մշակում՝ համագործակցության զարգացման ուղղությամբ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	հոկտեմբեր, 2014 թ.	առաջարկությունների փաթեթ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		
159.	<p>Արդյունաբերական համագործակցության խորացման նպատակով Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների արդյունաբերական ոլորտներում առկա համագործակցական կապերի վերլուծություն՝ համագործակցության զարգացման համար հեռանկարային արդյունաբերական ճյուղերը բացահայտելու նպատակով</p> <p>Արդյունաբերության ոլորտներում համագործակցության մասով վարչարարական և այլ խոչընդոտների բացահայտման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	2014 թ.	
159.1.	<p>Արդյունաբերության ոլորտներում Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության միջև առկա համագործակցական կապերի ուսումնասիրություն՝ այդ ոլորտներն ի հայտ բերելու և հեռանկարային ուղղություններով համագործակցության զարգացմանը խոչընդոտող հանգամանքները վերացնելու նպատակով</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	հոկտեմբեր, 2014 թ.	առաջարկությունների փաթեթ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		

### XI. Ագրոարդյունաբերական համալիրի ոլորտ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
160.	Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական ապրանքների և սննդամթերքի արտաքին առևտրի կառուցվածքի, այդ թվում՝ անդամ պետությունների հետ արտաքին առևտրի կառուցվածքի վերլուծություն 2011-2013 թվականներն ընդգրկող ժամանակահատվածի համար	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամսվա ընթացքում	
160.1.	Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական ապրանքների և սննդամթերքի արտաքին առևտրի կառուցվածքի, այդ թվում՝ անդամ պետությունների հետ արտաքին առևտրի կառուցվածքի վերլուծություն 2011-2013 թվականներն ընդգրկող ժամանակահատվածի համար	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	28.02.2014 թ.	2011-2013 թթ. Ժամանակահատվածի համար ՀՀ ագրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական ապրանքների արտաքին առևտրի կառուցվածքի, այդ թվում՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
				տարածքի անդամ պետությունների հետ արտաքին առևտրի, վերլուծության հաշվետվություն
161.	<b>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության պետական աջակցության իրականացման ուսումնասիրության պատրաստում 2010-2013 թվականներն ընդգրկող ժամանակահատվածի համար</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամսվա ընթացքում</b>	
161.1.	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության պետական աջակցության իրականացման ուսումնասիրության պատրաստում 2010-2013 թվականներն ընդգրկող ժամանակահատվածի համար	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	28.02.2014 թ.	2010-2013 թթ. ժամանակահատվածի համար ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության իրականացման վերլուծության տեղեկատվություն
162.	<b>Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների միջև գյուղատնտեսության ոլորտի վերլուծական և վիճակագրական տվյալների փոխանակման միջոցառումների ապահովում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>անդամակցելու պահից</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
162.1.	Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների միջև գյուղատնտեսության ոլորտի վերլուծական և վիճակագրական տվյալների փոխանակման միջոցառումների ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2014 թ.	ՀՀ և անդամ պետությունների միջև գյուղատնտեսության ոլորտի վերլուծական և վիճակագրական տվյալների փոխանակման նախապատրաստում
163.	<b>Գյուղատնտեսության ոլորտում Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կիրառման խնդրի և Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցելուց հետո գյուղատնտեսության ոլորտի վրա դրանց ունեցած ազդեցության ուսումնասիրություն</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում</b>	
163.1.	Գյուղատնտեսության ոլորտում Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կիրառման խնդրի և Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	31.03.2014 թ.	գյուղատնտեսության ոլորտում ՀՀ և ՄՄ և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կիրառման



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	Հանրապետության անդամակցելուց հետո գյուղատնտեսության ոլորտի վրա դրանց ունեցած ազդեցության ուսումնասիրություն			Խնդրի ուսումնասիրություն և ՄՄ և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցելուց հետո գյուղատնտեսության ոլորտի վրա դրանց ունեցած ազդեցության վերծրության վերաբերյալ տեղեկատվություն
163.2.	Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի վերլուծություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	28.02.2014 թ.	տեղեկանք
163.3.	Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի ազդեցության վերլուծություն՝ Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	31.03.2014 թ.	տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	Հայաստանի Հանրապետության անդամակցելուց հետո			
164.	<b>Ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի հետ դրանք համապատասխանեցնելու նպատակով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում</b>	
164.1.	Ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի հետ դրանք համապատասխանեցնելու նպատակով	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	31.03.2014 թ.	ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում ՀՀ նորմատիվ իրավական ակտերի ցանկի վերաբերյալ տեղեկատվություն, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություն կատարել՝ դրանք ՄՄ և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի հետ համապատասխանեցնելու նպատակով

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
165.	<b>Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում համագործակցության հարցերով խորհրդակցությունների և հանդիպումների իրականացում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>անդամակցելու պահից</b>	
165.1.	Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում համագործակցության հարցերով խորհրդակցությունների և հանդիպումների իրականացում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2014 թ.	տեղեկանք
166.	<b>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության պետական աջակցության վերաբերյալ ծանուցումների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ «Գյուղատնտեսության պետական աջակցության միասնական կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի 7-րդ հոդվածի իրականացման նպատակով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելու պահից</b>	
166.1.	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության պետական աջակցության	ՀՀ գյուղատնտեսության	անդամակցելու պահից	ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	վերաբերյալ ծանուցումների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ «Գյուղատնտեսության պետական աջակցության միասնական կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի 7-րդ հոդվածի իրականացման նպատակով	նախարարություն		վերաբերյալ տեղեկությունների նախապատրաստում
166.2.	ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության վերաբերյալ տեղեկությունների պատրաստում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		տեղեկանք
166.3.	«Գյուղատնտեսության պետական աջակցության միասնական կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի 7-րդ հոդվածի իրականացմանը մասնակցություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		տեղեկանք

## XII. Բնական մենաշնորհների ոլորտ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
167.	Բնական մենաշնորհների ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ փոխգործակցող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմնի սահմանում	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից մեկ ամսվա ընթացքում	

167.1.	Բնական մենաշնորհների ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ փոխգործակցող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմնի սահմանում	ՀՀ հակամենաշնորհային կարգավորման աշխատանքային խումբ	24.01.2014 թ.	պաշտոնական գրություն, որում նշված է ՀՀ գործադիր իշխանության մարմինը
168.	<b>«Բնական մենաշնորհի ունեցող սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալը</b>	<b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</b>	
168.1.	«Բնական մենաշնորհի ունեցող սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալը	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով  ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	
169.	Բնական մենաշնորհի ունեցող սուբյեկտների գործունեության կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազային դրանք համապատասխանեցնելու նպատակով (տվյալ ոլորտում օրենսդրության	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում	

	ներդաշնակեցման համար համապատասխան միջոցների իրականացման հերթականության սահմանմամբ)			
169.1.	Բնական մենաշնորհի ունեցող սուբյեկտների գործունեության կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազային դրանք համապատասխանեցնելու նպատակով (տվյալ ոլորտում օրենսդրության ներդաշնակեցման համար համապատասխան միջոցների իրականացման հերթականության սահմանմամբ)	<p>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ էներգետիկայի նախարարություն</p> <p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p>	15.03.2014 թ.	տեղեկանք

### XIII. Էներգետիկայի ոլորտ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
170.	<b>Էներգետիկայի ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ փոխգործակցող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմնի սահմանում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամսվա ընթացքում</b>	
170.1.	Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը որպես էներգետիկայի ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ փոխգործակցող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության լիազոր մարմին ճանաչելու վերաբերյալ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 14.02.2014 թ.	ՀՀ կառավարության որոշում (որոշման թարգմանությունն ուղարկվում է ԵՏՀ)
171.	<b>Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպությունների համար էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների հասանելիության ապահովման պայմանների վերլուծություն՝ հաշվի առնելով այլ անդամ պետությունների հետ ընդհանուր սահմանի բացակայությունը</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>  <b>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</b>	<b>մինչև անդամակցելը</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
171.1.	Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպությունների համար էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման պայմանների համեմատական վերլուծության վերաբերյալ տեղեկանքի պատրաստում՝ հաշվի առնելով այլ անդամ պետությունների հետ ընդհանուր սահմանի բացակայությունը	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 14.02.2014 թ.	տեղեկանք
171.2.	Տեղեկանքի համաձայնեցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էներգետիկայի մասով ենթախմբի հետ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 25.02.2014 թ.	տեղեկանք
171.3.	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների հասանելիության ապահովման համար Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպության որոշում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 14.02.2014 թ.	որոշման նախագիծ
171.4.	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման պայմանների նախապատրաստման միջոցառումների ծրագրի հաստատում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 07.03.2014 թ.	միջոցառումների ծրագիր
171.5.	«Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման՝ ներառյալ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	անդամակցելուց հետո	միջոցառումների ծրագիր



NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմքերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների արդիականացում՝ հաշվի առնելով մյուս անդամ պետությունների հետ ընդհանուր սահմանի բացակայությունը			
171.6.	Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպության՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների հասանելիության ապահովում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	անդամակցելուց հետո՝ էներգահամա-կարգի զուգահեռ աշխատանքի ռեժիմում	տեղեկանք
172.	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված համաձայնագրերի (պայմանագրերի) և դրանց՝ «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	մինչև անդամակցելը	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<b>հասանելիության ապահովման՝ ներառյալ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմքերի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի իրականացման վրա ունեցած ազդեցության վերլուծություն</b>			
172.1.	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված համաձայնագրերի (պայմանագրերի) ցանկի կազմում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 14.02.2014 թ.	տեղեկանք
172.2.	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 14.03.2014 թ.	տեղեկանք

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	<p>պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված համաձայնագրերի (պայմանագրերի) և դրանց՝ «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների հասանելիության ապահովման՝ ներառյալ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմքերի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի իրականացման վրա ունեցած ազդեցության վերլուծություն՝ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի պայմաններում</p>			
172.3.	<p>Էլեկտրաէներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված համաձայնագրերի (պայմանագրերի) և դրանց՝ «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական</p>	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	մինչև 31.03.2014 թ.	արձանագրություն

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
	մենաշնորհների ծառայությունների հասանելիության ապահովման՝ ներառյալ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմքերի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի իրականացման վրա ունեցած ազդեցության վերլուծություն՝ Հայաստանի Հանրապետության և ՄՄ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի պայմաններում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էներգետիկայի մասով ենթախմբի հետ			
173.	<b>Էլեկտրաէներգետիկայի ոլորտը կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցում</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>անդամակցելուց հետո</b>	
174.	<b>Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի հետ դրանք համապատասխանեցնելու նպատակով</b>	<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում</b>	

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Փաստաթղթի վերջնական տեսքը
173, 174.1.	Եվրասիական տնտեսական հանձնաժողովից անդամ պետությունների՝ էլեկտրաէներգետիկայի սուբյեկտների գործունեության կարգավորման ոլորտում գործող նորմատիվ իրավական ակտերի (որոնք ներառում են տեխնիկական կանոնակարգեր և շուկայի կանոններ) ստացում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն  ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	20.02.2014 թ.	ԵՏՀ գրություն
173, 174.2.	Հայաստանի Հանրապետության գործող նորմատիվ իրավական ակտերի (որոնք ներառում են տեխնիկական կանոնակարգեր և շուկայի կանոններ) և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ներկայացված նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության համեմատական վերլուծություն	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	10.03.2014 թ.	տեղեկանք
